COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE
Committee of Ministers
Comité des Ministres

Ստրասբուրգ, 2011 թվականի ապրիլի 20

Հանրամատչելի

ՇԿԽԿ/Կ/III(2010)006

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայաստանի մասին երրորդ եզրակացություն՝

ընդունված 2010 թվականի հոկտեմբերի 14-ին

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

2006 թվականի մայիսին Խորհրդատվական կոմիտեի կողմից ընդունված երկրորդ Եզրակացության ընդունումից ի վեր Հայաստանը ձեռնարկել է մի շարք միջոցառումներ՝ Շրջանակային կոնվենցիայի իրականացման հարցում առաջընթաց գրանցելու նպատակով: Իշխանությունները շարունակում են ցուցաբերել ներառական մոտեցում Շրջանակային կոնվենցիայի գործողության շրջանակի հարցում եւ համագործակցում են ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների հետ, որոնք ապրում են Հայաստանում: Երկրում գերակշռում է ազգային փոքրամասնությունների եւ մեծամասնության միջեւ հանդուրժողականության եւ փոխըմբռնման ընդհանուր մթնոլորտ:

Ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչությունը եւ Ազգային փոքրամասնությունների ազգային–մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհուրդը շարունակում են ակտիվ դեր խաղալ ազգային փոքրամասնությունների խնդիրների մասին իրազեկությունը բարձրացնելու հարցում եւ փորձում են լուծել ամենահրատապ խնդիրները:

Այնուամենայնիվ, Շրջանակային կոնվենցիայի որոշ դրույթների իրականացման հետ կապված դեռեւս խնդիրներ կան: Մասնավորապես, 2011 թվականի համար ծրագրված մարդահամարի առաջարկվող հարցաշարում ազգության (էթնիկ) պատկանելության եւ լեզվի մասին հարցերին պատասխանելու պարտադիր բնույթը խնդիրներ է առաջացնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ընտրելու, որ իրենց վերաբերվեն կամ չվերաբերվեն որպես այդպիսիք:

Դեռեւս չի ընդունվել խտրականությունը բացառող որեւէ համապարփակ իրավական ակտ, եւ այս ոլորտում դեռեւս բացակայում են վստահելի վիճակագրական տվյալներ:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների ծրագրերը կարող են բացասաբար անդրադառնալ տեղական մակարդակով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ հանրային մասնակցության իրավունքի վրա:

Անհապաղ գործողություններ պահանջող խնդիրները

- **2011 թվականի բնակչության մարդահամարի նախապատրաստման համատեքստում վերանայել ազգային փոքրամասնության պատկանող անձանց նույնացման եւ նրանց լեզվի վերաբերյալ հարցերի շարադրանքը եւ հարցաշարում կիրառվող մեթոդաբանությունը**.
- **ձեռնարկել կտրուկ միջոցներ ապահովելու համար, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները պատշաճ կերպով հաշվի առնվեն տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներ ծրագրելիս եւ իրականացնելիս ու երաշխավորել, որ այդ բարեփոխումները բացասաբար չանդրադառնան տեղական մակարդակով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ արդյունավետ հանրային մասնակցության իրավունքի վրա:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 9
Դիտանցման գործընթաց 9
Դիտանցման երկու փուլից հետո Շրջանակային կոնվենցիայի իրականացման ընդհանուր ամփոփում 10
Օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ 11
Մարդահամար եւ էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքում 13
Միջմշակութային երկխոսություն եւ հանդուրժողականություն 14
Զանգվածային լրատվամիջոցներ 15
Հայրանուններ 16
Կրթություն 16
ԻԻ. ՀՈԴՎԱԾ ԱՌ ՀՈԴՎԱԾ ԿԱՏԱՐՎԱԾ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 17
Շրջանակային կոնվենցիայի 3–րդ հոդված 17
Շրջանակային կոնվենցիայի 4–րդ հոդված 25
Շրջանակային կոնվենցիայի 5–րդ հոդված 32
Շրջանակային կոնվենցիայի 6–րդ հոդված 34
Շրջանակային կոնվենցիայի 9–րդ հոդված 37
Շրջանակային կոնվենցիայի 10–րդ հոդված 40
Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդված 42
Շրջանակային կոնվենցիայի 12–րդ հոդված 45
Շրջանակային կոնվենցիայի 14–րդ հոդվածը 48
Շրջանակային կոնվենցիայի 15–րդ հոդված 51
Շրջանակային կոնվենցիայի 16–րդ հոդված 55
Շրջանակային կոնվենցիայի 18–րդ հոդված 56
ԻԻԻ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 58
Դիտանցման երկու փուլերից հետո դրական զարգացումները 58
Դիտանցման երկու փուլերից հետո մտահոգող հարցեր 59
Առաջարկություններ 61

Հետագա առաջարկություններ 63

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդատվական կոմիտեն ընդունել է սույն Եզրակացությունը՝ Շրջանակային կոնվենցիայի 26 (1) հոդվածի եւ Նախարարների կոմիտեի (97) 10 որոշման 23-րդ կանոնի համաձայն: Եզրահանգումները հիմնված են 2009 թվականի նոյեմբերի 5-ին ստացված Պետական զեկույցի (այսուհետ՝ Պետական զեկույց) մեջ պարունակվող տեղեկությունների եւ այլ գրավոր աղբյուրների, ինչպես նաեւ պետական մարմինների եւ հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ շփումների ժամանակ Խորհրդատվական կոմիտեի կողմից՝ 2010 թվականի հունիսի 21-24–ը Երեւան կատարած այցելության ժամանակ ձեռք բերված տվյալների վրա:

2. I բաժինը պարունակում է Հայաստանում Շրջանակային կոնվենցիայի իրականացման հետ կապված առանցքային հարցերի մասին Խորհրդատվական կոմիտեի հիմնական եզրահանգումները: Այդ եզրահանգումներն առավելապես արտացոլված են II բաժնում պարունակվող հոդված առ հոդված կատարված եզրահանգումների մեջ եւ վերաբերում են Շրջանակային կոնվենցիայի այն դրույթներին, որոնց շուրջ Խորհրդատվական կոմիտեն էական հարցեր ունի բարձրացնելու:

3. Երկու բաժիններում էլ շատ հղումներ են կատարվում Խորհրդատվական կոմիտեի կողմից Հայաստանի մասին առաջին եւ երկրորդ Եզրակացությունների (ընդունված համապատասխանաբար 2002 թվականի մայիսի 16-ին եւ 2006 թվականի մայիսի 12-ին) եւ Նախարարների կոմիտեի 2003 թվականի հունվարի 15-ին եւ 2007 թվականի փետրվարի 7-ին ընդունված համապատասխան որոշումների

հիման վրա Շրջանակային կոնվենցիայի դիտանցման արդյունքում կատարված եզրահանգումներից հետո ձեռնարկված միջոցներին:

4. III բաժնում նշված ամփոփիչ դիտողությունները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի մասին Նախարարների կոմիտեի առաջիկա եզրակացությունների եւ առաջարկությունների համար:

5. Խորհրդատվական կոմիտեն ակնկալում է շարունակել Հայաստանի իշխանությունների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ իր երկխոսությունը, որոնք ներգրավված են Շրջանակային կոնվենցիայի իրականացման աշխատանքներում: Համապարփակ եւ թափանցիկ գործընթացին նպաստելու համար Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին սույն Եզրակացությունը ստանալուն պես հրապարակել այն:

6. Խորհրդատվական կոմիտեն նաեւ ցանկանում է պետական մարմինների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ 2009 թվականի ապրիլի 16-ին Նախարարների կոմիտեն ընդունել է նոր կանոններ Խորհրդատվական կոմիտեի Եզրակացությունների եւ դիտանցման այլ փաստաթղթերի հրապարակման համար՝ նպատակ հետապնդելով մեծացնել թափանցիկությունը եւ սկզբնապես տրամադրել դիտանցման արդյունքների եւ եզրահանգումների մասին տեղեկությունները ներգրավված բոլոր կողմերին (տե՛ս CM/Res(2009)3 որոշումը, որով փոփոխվել է դիտանցման միջոցառումների մասին (97) 10 որոշումը՝ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 24-26–րդ հոդվածների համաձայն):

Ի. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Դիտանցման գործընթաց

7. Հայաստանի իշխանությունները շարունակել են ցուցաբերել կառուցողական մոտեցում Շրջանակային կոնվենցիայի դիտանցման գործընթացի ընթացքում՝այդ թվում ժամանակին ներկայացնելով Պետական զեկույցը: Խորհրդատվական կոմիտեն ցանկանում է շեշտել, որ որպես դրական քայլ Հայաստանի իշխանությունները 2007 թվականին կազմակերպել են Եզրակացության ընդունմանը հաջորդող սեմինար, որը որոշիչ դեր խաղաց դիտանցման երկրորդ փուլի արդյունքները հրապարակելու հարցում:

8. Խորհրդատվական կոմիտեն հաշվի է առնում, որ Պետական երրորդ զեկույցը կազմվել է ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների հետ խորհրդակցության արդյունքում, որոնք ներկայացված են Ազգային փոքրամասնությունների ազգային–մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդում (Համակարգող խորհուրդ): Հայաստանի իշխանությունները նաեւ տեղեկացրել են, որ իրենք կազմակերպել են կլոր սեղան–քննարկում մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ նպատակ հետապնդելով պարզել նրանց կարծիքը ազգային փոքրամասնության պատկանող անձանց վիճակի մասին եւ կազմել Պետական զեկույցը՝ դրանում ներառելով տարբեր աղբյուրներից ստացված համապարփակ տեղեկություններ:

9. Խորհրդատվական կոմիտեն այցելել է Հայաստան 2010 թվականի հունիսի 21-24-ը: Այս այցելությունը, որը կազմակերպված է եղել Հայաստանի Կառավարության կողմից, հնարավորություն է տվել ուղիղ երկխոսության մեջ մտնել համապատասխան կողմերի հետ: Կառավարությունից եւ այլ աղբյուրներից, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների կողմից ստացված լրացուցիչ տեղեկությունները հատկապես օգտակար են եղել: Քննարկումներ են տեղի ունեցել ոչ միայն Երեւանում, այլեւ մերձակա տարածքներում (Զովունի եւ Վերին Դվին՝ Արարատի շրջանում), որտեղ բնակվում են ասորի եւ եզդի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է սույն Եզրակացության ընդունման գործընթացում Հայաստանի իշխանությունների կողմից ցուցաբերած համագործակցության ոգին:

Դիտանցման երկու փուլից հետո Շրջանակային կոնվենցիայի իրականացման ընդհանուր ամփոփում

10. 1998 թվականի Շրջանակային կոնվենցիայի վավերացումից ի վեր Հայաստանը շարունակել է ազգային փոքրամասնություններին պաշտպանելու իր ջանքերը: Հայաստանի իշխանությունները շարունակում են կատարել սույն Պայմանագրի իրականացման իրենց պարտավորությունները եւ հաճախ դրան հղումներ են կատարում ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությանն ուղղված քաղաքականության հետագա ընթացքում:

11. Բացի այդ՝ իշխանությունները միշտ ցուցաբերել են իրապես համագործակցային մոտեցում Խորհրդատվական կոմիտեի հետ տեղեկատվություն փոխանակելու հարցում:

12. Խորհրդատվական կոմիտեն ընդունում է, որ ներկայիս տնտեսական ճգնաժամը զգալի ազդեցություն է թողնում Հայաստանի վրա, այդ թվում՝ Շրջանակային կոնվենցիան իրականացնելու նպատակով ռեսուրսների բաշխման առումով: Այնուամենայնիվ, այն կարեւոր է համարում շարունակել ազգային փոքրամասնություններին պաշտպանելու ջանքերը, որոնք ձեռնարկվել են Շրջանակային կոնվենցիայի վավերացումից ի վեր՝ հենվելով արդեն ձեռք բերված արդյունքների վրա:

13. Շարունակվող տնտեսական դժվարությունները բացասաբար են անդրադառնում Հայաստանի հասարակության, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց վրա, որոնցից շատերը վերջին տարիներին արտագաղթել են Հայաստանից: Փոքրամասնությունների իրավունքների եւ նրանց դեմ խտրականության խնդիրների մասին իրազեկությունը մնում է ոչ բավարար, այդ թվում՝ ազգային փոքրամասնության պատկանող անձանց շրջանում:

Օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակ

14. Վերջին Եզրակացության ընդունումից ի վեր օրենսդրական էական փոփոխություններ չեն եղել: Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում գոյություն ունի

համատարած համաձայնություն, որ կարիք չկա օրենք ընդունել ազգային փոքրամասնությունների հարցերով, եւ որ ներկայիս օրենսդրական եւ վարչական ոլորտային միջոցները բավարար են:

15. Խտրականությունը բացառող օրենսդրության հարցում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Խտրականության դեմ պայքարը կարգավորվում է տարբեր իրավական ակտերով, սակայն չի երաշխավորվում խտրականության դեմ պատշաճ պաշտպանություն: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը շարունակում է վայելել հանրային լայն աջակցություն եւ ստանում է մեծաքանակ անհատական բողոքներ:

16. Ազգային փոքրամասնությունների հարցերով Կառավարության քաղաքականության իրականացման համար պատասխանատու հիմնական մարմինները Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչությունն է եւ քսաներկու ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից բաղկացած Ազգային փոքրամասնությունների ազգա–մշակութային կազմակերպությունները համակարգող խորհուրդը: Երկու մարմիններն էլ շարունակում են ակտիվ դերակատարում ունենալ ազգային փոքրամասնությունների հարցերով իրազեկության բարձրացման եւ հրատապ խնդիրները կանոնավոր երկխոսության միջոցով լուծելու հարցերում:

Մարդահամար եւ էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքում

17. 2011 թվականին ծրագրված է բնակչության նոր մարդահամար եւ իշխանությունները արդեն նախապատրաստական աշխատանքներ են տանում այդ ուղղությամբ: Առկա տեղեկությունների համաձայն՝ ազգային (էթնիկ) պատկանելության, լեզվի եւ կրոնի հարցերի պատասխանները պարտադիր են եւ ընդհանուր բնույթի չեն՝ սահմանափակելով հարցվողների պատասխանների ընտրությունը սահմանափակ տարբերակներով: Սա լուրջ խնդիրներ է առաջացնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ փոքրամասնություն համարվելու կամ չհամարվելու իրավունքի հետ կապված, ինչը նախատեսված է Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածով: Հարցաշարը նաեւ չի համապատասխանում ՄԱԿ–ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի եւ Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակի (Եվրաստատ) 2010 թվականի մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման առաջարկություններին:

18. 2001 թվականի մարդահամարի ժամանակ հավաքված տվյալներից եւ ըստ էթնիկ պատկանելության բնակչության միգրացիոն հոսքերի մասին որոշ նպատակային տեղեկություններից բացի՝ վստահելի վիճակագրության էական պակաս է զգացվում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ՝ ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական բաշխվածության, հատկապես զբաղվածության

ոլորտում: Այս հանգամանքը բացասաբար է անդրադառնում իշխանությունների աշխատանքի վրա, երբ նրանք կազմում, իրականացնում եւ դիտանցում են ազգային փոքրամասնությունների հետ կապված հանրային քաղաքականության ծրագրեր՝ հատկապես անապահով խմբերի մասով:

Միջմշակութային երկխոսություն եւ հանդուրժողականություն

19. Հայաստանում ազգային փոքրամասնությունների եւ բնակչության մեծամասնության միջեւ գերակայում է հանդուրժողականության եւ ըմբռնման ընդհանուր մթնոլորտ, եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից իրենց համայնքի անդամների նկատմամբ անհանդուրժողականության դրսեւորումներ չեն արձանագրվել: Չնայած Հայաստանում առկա տնտեսական դժվարություններին՝ իշխանությունները շարունակում են ազգային փոքրամասնությունների ավանդույթները եւ մշակույթները խթանելու նպատակով ֆինանսական ռեսուրսներ տրամադրել: Փոփոխություններ են կատարվել դպրոցի ուսումնական ծրագրերում՝ այդտեղ ներառելով «ազգային փոքրամասնությունների իրավունքներ» եւ «հանդուրժողականություն»

թեմաները, որի նպատակն է բարձրացնել երեխաների իրազեկությունը ազգային փոքրամասնությունների դերակատարման պատմական, սոցիալական եւ մշակութային կողմերի մասին, եւ թե ինչ ներդրում են նրանք ունեցել Հայաստանի հասարակության համար:

20. Դիտանցման առաջին եւ երկրորդ փուլերում քուրդ եւ եզդի փոքրամասնությունների միջեւ արձանագրված լարվածությունը եւ անհանդուրժողականությունը շարունակվում է՝ չնայած իշխանությունները փորձեր են կատարում նրանց միջեւ բարիդրացիական հարաբերություններ խթանելու համար:

21. Կոմունիստական վարչակազմի ժամանակ բռնագանձված եկեղեցու սեփականությունը վերադարձվել է ասորական եւ ռուսական ուղղափառ համայնքներին:

Զանգվածային լրատվամիջոցներ

22. Հայաստանի հանրային ռադիոն եւ հեռուստատեսությունը շարունակում են հեռարձակել հաղորդումներ ազգային փոքրամասնությունների համար, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով: Ընդհանուր առմամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները նշել են, որ նրանց առնչվող հարցերի հեռարձակումը արդար է եւ հավասարակշռված: Այնուամենայնիվ, հակահրեական հայտարարությունները, որոնք արվել են որոշ զանգվածային լրատվամիջոցներում՝ ներառյալ տպագիր մամուլում եւ

«ԱԼՄ» մասնավոր հեռուստաընկերության եթերում, չեն ստացել համարժեք արձագանք իշխանությունների կողմից՝ չնայած հրեական համայնքի ներկայացուցիչների բողոքներին:

23. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի՝ 2008 թվականին ընդունված փոփոխությունների համաձայն՝ փոքրամասնության լեզուներով հեռարձակման առավելագույն ժամանակահատվածը օրական մեկ ժամ է հանրային ռադիոյով եւ շաբաթական երկու ժամ՝ հանրային հեռուստատեսությամբ:

Հայրանուններ

24. Ռուս, բելառուս եւ ուկրաինացի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ծննդյան եւ ամուսնության վկայականներում եւ ինքնությունը հաստատող փաստաթղթերում հայրանունները հայերեն լեզվով թարգմանելիս (վերարտադրելիս) հաշվի չեն առնվում այս լեզուների քերականական կանոնները, եւ ուստի, դրանք չեն համապատասխանում 11-րդ հոդվածի 1–ին պարբերությանը եւ Շրջանակային կոնվենցիայի համապարփակ մեկնաբանության ընդհանուր սկզբունքին:

Կրթություն

25. Ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդվում են շրջանների դպրոցներում, որտեղ փոքրամասնություններին պատկանող անձինք բավականին շատ են բնակվում: Ջանքեր են գործադրվում հրատարակել դասագրքեր փոքրամասնությունների լեզուներով՝ ռուսերեն, ասորերեն, եզդիերեն եւ քրդերեն:

26. Համալսարանական ընդունելության քննությունները բարեհաջող հանձնած ազգային փոքրամասնություններին պատկանող թեկնածուներին ընդունելուն առաջնահերթություն տալը զգալիորեն նպաստել է նմանատիպ դիմորդների ընդունելությանը համապատասխան բարձրագույն կրթական հաստատություններ:

II. ՀՈԴՎԱԾ ԱՌ ՀՈԴՎԱԾ ԿԱՏԱՐՎԱԾ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Շրջանակային կոնվենցիայի 3–րդ հոդված

Շրջանակային կոնվենցիայի կիրառման անհատական շրջանակ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

27. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսել է Հայաստանի իշխանություններին պահպանել Շրջանակային կոնվենցիայի կիրառման շրջանակի նկատմամբ ներառական մոտեցումը եւ, հարկ եղած դեպքում, նախատեսել այլ խմբերին պատկանող մարդկանց՝ ներառյալ քաղաքացի չհանդիսացող անձանց ներգրավումը Շրջանակային կոնվենցիայի կիրառման շրջանակում:

Ներկա իրավիճակը

28. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ դիտանցման երկրորդ փուլից ի վեր ներառական մոտեցման հարցում փոփոխություն տեղի չի ունեցել Հայաստանի իշխանությունների կողմից՝ կապված Շրջանակային կոնվենցիայի կիրառման շրջանակի հետ: Իշխանությունները շարունակում են ցուցաբերել բաց մոտեցում եւ համագործակցել ազգային փոքրամասնություն ներկայացնող բոլոր համայնքների հետ՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք մասնակցում են Համակարգող խորհրդի[1] աշխատանքներին, թե ոչ:

29. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ քուրդ եւ եզդի համայնքների ներկայացուցիչների միջեւ դեռեւս շարունակվում են վիճաբանություններ այն մասին, թե արդյո՞ք նրանք իրարից առանձին ազգային ինքնություն ունեն, թե ոչ, արդյո՞ք միեւնույն ազգային խմբի մաս են կազմում, որոնք տարբերվում են ըստ կրոնական ինքնության: Այս առումով Խորհրդատվական կոմիտեն կարեւոր է համարում կրկնել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է իրավունք ունենա ընտրել, որ իրեն պետք է վերաբերվեն որպես այդ ազգային

[1] Համակարգող խորհրդում ներկայացված են տասներկու ազգային փոքրամասնություններ՝ ասորիներ, բելառուսներ, վրացիներ, գերմանացիներ, հույներ, հրեաներ, քրդեր, լեհեր, ռուսներ, ուկրաինացիներ եւ եզդիներ: Առավել փոքրաթիվ փոքրամասնությունները, օրինակ՝ աբխազները, աբազիները, բուլղարացիները, իրանցիները, լատվիացիները, լիտվացիները, մոլդովացիները, մորդվանները, ինգուշները, օսերը, ռումինացիները, թաթարները, ուդիններ եւ մյուսները ներկայացված չեն Համակարգող խորհրդում:

փոքրամասնության անդամ կամ ոչ որպես այդպիսին՝ Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն:

30. Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն մտահոգությամբ նշում է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձինք, որոնք ներկայացված չեն Համակարգող խորհրդում, հավասարապես չեն օգտվում առավել մեծ համայնք ներկայացնող փոքրամասնություններին տրամադրվող հնարավորություններից, ինչպես ներկայացված փոքրամասնությունները: Սա, մասնավորապես, վերաբերում է խորհրդատվության գործընթացին եւ դրամական միջոցների բաշխմանը:

Առաջարկություններ

31. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին պահպանել Շրջանակային կոնվենցիայի կիրառման շրջանակի մասով համապարփակ մոտեցում:

32. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է Հայաստանի իշխանություններին շարունակել լրջորեն պահպանել այլ խմբերի հետ ինքնանույնացման սկզբունքը, ինչպես սահմանված է Շրջանակային կոնվենցիայի 3–րդ հոդվածով:

33. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին շարունակել հնարավորություն տալ այլ խմբերի պատկանող անձանց՝ ներառյալ, հարկ եղած դեպքում, քաղաքացի չհանդիսացող անձանց, օգտվելու Շրջանակային կոնվենցիայի գործողությունից՝ ըստ հոդվածների:

Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագիծ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

34. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսել էր իշխանություններին շարունակել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի շուրջ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունները եւ ապահովել այդ օրենսդրության համապատասխանությունը փոքրամասնությունների պաշտպանության մասով միջազգային չափանիշներին:

Ներկա իրավիճակը

35. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մեծամասնությունը համաձայն է, որ Հայաստանում ազգային փոքրամասնությունների մասին օրենք ընդունելու անհրաժեշտություն չկա: Խորհրդատվական կոմիտեի զրուցակիցները գտնում են, որ նման օրենքը ավելի շատ խնդիրներ կստեղծի, քան կլուծի դրանք, եւ որ ներկայիս ոլորտային օրենսդրությունը եւ վարչական կարգավորումները (օրինակ կրթության, մշակույթի եւ զանգվածային լրատվամիջոցների ոլորտներում) բավարար են:

Առաջարկություններ

36. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին շարունակել երկխոսությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար հնարավորինս արդյունավետ եղանակով երաշխավորելու համար Շրջանակային կոնվենցիայի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունը:

37. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ապահովել, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք լիակատար տեղեկացված լինեն Շրջանակային կոնվենցիայի դրույթներով իրենց վերապահվող իրավունքների մասին, հնարավորության դեպքում՝ իրենց լեզվով:

Տվյալների հավաքում եւ ինքնանույնացում

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

38. Դիտանցման նախկին փուլերում Խորհրդատվական կոմիտեն ողջունել է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնանույնացման սկզբունքի կիրառումը:

Ներկա իրավիճակը

39. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ 2011 թվականին ծրագրված է բնակչության նոր մարդահամար եւ իշխանությունները արդեն նախապատրաստական աշխատանքներ են տանում այդ ուղղությամբ:

40. Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է այն փաստը, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցություններ չեն վարվել հարցաշարի հարցերի ձեւակերպումների եւ դրանց համար օգտագործված մեթոդաբանության հարցերով: Խորհրդատվական կոմիտեն նաեւ անհանգստացած է, որ Ազգային վիճակագրական ծառայությունից ստացված տվյալների համաձայն՝ ազգային (էթնիկ) պատկանելության, լեզվի եւ կրոնի մասին հարցերի պատասխանները պարտադիր են եւ որ այդ հարցերը ընդհանուր բնույթի չեն:

41. Խորհրդատվական կոմիտեն ցանկանում է հիշեցնել, որ ազգային (էթնիկ) պատկանելության, լեզվի (եւ կրոնի) մասին հարցերը մարդահամարում պետք է լինեն այլընտրանքային եւ ընդհանուր բնույթի

հարցեր՝ ինչպես սահմանված է ՄԱԿ–ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի եւ Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակի (Եվրաստատ) 2010 թվականի մարդահամարի եւ բնակության պայմանների հաշվառման առաջարկություններում:[2] Խորհրդատվական կոմիտեն ցանկանում է շեշտել, որ պետք է նաեւ հնարավորություն տա նշելու բազմակի ինքնության դեպքերը (օրինակ՝ խառը ամուսնություններից ծնված երեխաների համար),[3] որպեսզի մարդահամարի արդյունքներով արտացոլվի յուրաքանչյուր անհատի իրական ընտրությունը:

42. Խորհրդատվական կոմիտեն ցանկանում է շեշտել, որ հարցաշարը, իր ներկա վիճակով, հնարավորություն չի տալիս ազգային փոքրամասնության պատկանող անձանց ազատորեն կողմնորոշվել՝ իրենք ցանկանում են համարվել այդ փոքրամասնության անդամ թե ոչ, եւ, ուստի, այն հակասում է Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածին: Ավելին, այն չի համապատասխանում ՄԱԿ–ի ԵՏՀ եւ Եվրաստատի վերոնշյալ առաջարկություններին:

---

[2] Տե՛ս http://www.unece.org/stats/publications/CES_2010_Census_Recommendations_English.pdf § 425: Էթնիկ պատկանելության վերաբերյալ տեղեկությունները հետեւաբար պետք է հիմնված լինել անձի ազատ ինքնահայտարարման, հարցեր պետք է լինել բաց, հարցազրուցավարները պետք է խուսափեն հարցվողներին պատասխաններ հուշելուց» եւ § 427 «էթնիկ պատկանելության ինքնահայտարարման ազատությունը երաշխավորելու համար, հարցվողները պետք է ունենան «ոչ մեկը» եւ «հրաժարվում է պատասխանել»տարբերակները, երբ նրանց հարց է տրվում էթնիկ պատկանելության մասին: Երկրները մարդահամարի վերաբերյալ ցուցումներում եւ մարդահամարի փաստաթղթերում պետք է բացատրեն, թե խառը ամուսնությունից ծնված երեխաների էթնիկ պատկանելությունը ինչպես է որոշվում»

[3] Տե՛ս http://www.unece.org/stats/publications/CES_2010_Census_Recommendations_English.pdf § 426: § 426 «Հարցվողները պետք է ունենան մեկից ավելի էթնիկ պատկանելություն նշելու ազատություն կամ նշել էթնիկ պատկանելության համադրություն, եթե այդպես են ցանկանում»:

Առաջարկություններ

43. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում նաեւ իշխանություններին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության արդյունքում վերանայել ազգային փոքրամասնության պատկանելության եւ փոքրամասնությունների լեզվի մասին անձանց ինքնության վերաբերյալ հարցերի շարադրանքը եւ հարցաշարում կիրառվող մեթոդաբանությունը:

44. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին հատուկ միջոցներ ձեռնարկել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց եւ փոքրամասնության լեզվով խոսող անձանց մարդահամար անցկացնող անձանց շրջանակում ընդգրկելու համար: Կոմիտեն նաեւ խրախուսում է թարգմանել մարդահամարի հարցաշարը փոքրամասնությունների լեզուներով:

45. Իշխանությունները պետք է ձեռնարկեն իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շրջանում հաջորդ մարդահամարին նախորդող շրջանում, մասնավորապես, զանգվածային լրատվամիջոցներով եւ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ համագործակցության միջոցով: Այդ միջոցառումները պետք է ընդգծեն բնակչության էթնիկ կազմի մասին տեղեկությունների հավաքման, ինչպես նաեւ անձնական տվյալների պաշտպանության ազգային երաշխիքների եւ միջազգային չափանիշների կարեւորությունը եւ օգտակարությունը: Էթնիկ

պատկանելության մասին տվյալների հավաքումը պետք է իրականացվի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցության պայմաններում եւ պետք է պահպանվեն բոլոր այն երաշխիքները, որոնք, մասնավորապես, վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանը, իշխանությունների կողմից նման տվյալների նպատակային եւ սահմանափակ կիրառությանը եւ համապատասխան անձանց կողմից ազատ, տեղեկացված եւ հստակ համաձայնությանը, ինչպես սահմանված է անձնական տվյալների պաշտպանության մասին Նախարարների կոմիտեի (97)18 առաջարկներում:

Շրջանակային կոնվենցիայի 4–րդ հոդված
Խտրականության ոլորտում ինստիտուցիոնալ եւ իրավական զարգացումներ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

46. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին զգոն լինել խտրականության հնարավոր դեպքերի հարցում եւ այս առումով խորությամբ դիտանցել իրավիճակը:

Ներկա իրավիճակը

47. Վերջին Եզրակացության ընդունումից ի վեր խտրականության դեմ օրենսդրության ոլորտում էական փոփոխություններ չեն եղել: Հայաստանի

Սահմանադրության 14.1 հոդվածով, որը ավելացվել է 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո, նշվում է, որ «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ: Սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի կամ աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելու, գույքային դրության, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիման վրա դրսեւորվող ցանկացած խտրականություն արգելվում է»:

48. Քրեական օրենսգիրքով[4] քրեականացվում են այն գործողությունները, որոնք «հրահրում են ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն՝ ռասայական գերազանցության կամ ազգային արժանապատվության ստորացման միջոցով»: Բացի դրանից՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով արգելվում է ստեղծել որեւէ կազմակերպություն, որը քարոզում է սահմանադրական կարգի տապալում, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահրում, կամ բռնություն եւ պատերազմ: Նման արգելք գործում է նաեւ «Կուսակցությունների մասին» օրենքում: Խորհրդատվական կոմիտեն նաեւ նշում է, որ իշխանությունների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն, քրեական դատավարության, սոցիալական ապահովության եւ աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունների մեջ կան խտրականությունը բացառող որոշ դրույթներ:

[4] Տե՛ս Քրեական օրենսգրքի § 226

49. Խորհրդատվական կոմիտեին հասանելի տեղեկությունների համաձայն՝ կրոնական փոքրամասնություն ներկայացնող անձանց դեմ խտրականության մի քանի առանձին դեպքեր են գրանցվել, այդ թվում՝ մի դեպք, որը վերաբերում է ճանաչված ազգային փոքրամասնության պատկանող անձի: Խտրականությունից տուժածներից մի քանիսը փորձել են իրավական պաշտպանություն գտնել դատարաններում եւ նրանց հայցը բավարարվել է:

50. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ Հայաստանի իշխանությունների նման տարաբաժանված մոտեցումը, որը ներկայումս գոյություն ունի խտրականության դեմ օրենսդրության հարցում, չի երաշխավորում խտրականության դեմ համարժեք պաշտպանություն: Կոմիտեն նաեւ գտնում է, որ իշխանությունները պետք է վերանայեն այս մոտեցումը եւ նախատեսեն ընդունել խտրականության դեմ համապարփակ օրենսդրություն՝ոգեշնչվելով Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության առաջարկությունների համապատասխան դրույթներով:[5]

51. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նկատում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը շարունակում է վայելել հանրային լայն աջակցություն եւ ստանում է բավականին մեծ թվով բողոքներ (3789 բողոք 2009 թվականին)՝ այդ թվում ազգային փոքրամասնություններին

[5] Տե՛ս http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri

պատկանող անձանց ներկայացնող կազմակերպությունների կողմից: Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ այդ բողոքներն ընդհանուր բնույթի են եւ չեն ենթադրում ազգային փոքրամասնության պատկանող անձանց կոնկրետ իրավունքների ոտնահարումներ:

52. Մարդու իրավունքների պաշտպանը եւս իրավասու է սկսել ուսումնասիրել դեպքերն իր սեփական նախաձեռնությամբ, հատկապես եթե տեղի են ունեցել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների ենթադրյալ դեպքեր: Այնուամենայնիվ, Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները խորհրդատվական բնույթի են եւ պարտադիր իրավական բնույթ չեն կրում:

53. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ իշխանությունները չեն հավաքում վիճակագրական տվյալներ տարբեր ոլորտներում խտրականության դեպքերի թվաքանակի եւ բնույթի մասին:

Առաջարկություններ

54. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ Մարդու իրավունքների պաշտպանի հետ խորհրդակցության արդյունքում ընդունել համապարփակ օրենսդրություն խտրականությունը արգելելու մասին եւ տրամադրել պաշտպանության արդյունավետ միջոցներ պետական եւ մասնավոր սուբյեկտների կողմից խտրականության դեմ: Խտրականության

սահմանումները, որոնք, ի թիվս այլոց, ընդգրկում են խտրականության ուղղակի եւ անուղղակի ձեւեր, պետք է ներառվեն խտրականության դեմ այդ օրենսդրության շրջանակում:

55. Խորհրդատվական կոմիտեն նաեւ խրախուսում է իշխանություններին շարունակել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խտրականությունը կանխարգելելու եւ դրա դեմ պայքարելու համար:

56. Խորհրդատվական կոմիտեն գտնում է, որ իշխանությունները պետք է ներդնեն մեխանիզմներ խտրականության դեմ բողոքների մասին տվյալներ հավաքելու համար, այդ թվում՝ դատարաններում գրանցված խտրականության դեպքերի մասին՝ նպատակ հետապնդելով նպաստել օրենսդրության եւ գործող ինստիտուցիոնալ մեխանիզմների արդյունավետության գնահատմանը:

57. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին շարունակել իրենց աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝ շարունակելով տրամադրել համապատասխան ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական՝ վերջինիս հնարավորություն տալով կատարել իր պարտականությունները արդյունավետորեն եւ անկախության պայմաններում եւ ուժեղացնել խտրականության ենթադրվող դեպքերի դիտանցման գործընթացը:

Էթնիկ պատկանելության վերաբերյալ տվյալների հավաքում:

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

58. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսել է իշխանություններին հավաքել վիճակագրական տվյալներ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ՝ խթանելու համար ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց նպատակաուղղված դրական եւ արդյունավետ միջոցների մշակումը:

Ներկա իրավիճակը

59. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Պետական զեկույցը չի տրամադրում տվյալներ, որոնք ավելի ուշ են հավաքվել, քան 2001 թվականի մարդահամարի տեղեկությունները՝ բացառությամբ էթնիկ պատկանելությամբ բնակչության միգրացիոն հոսքերի վերաբերյալ տվյալների: Եզդի ազգային փոքրամասնության պատկանող անձանց կողմից ծանր սոցիալ–տնտեսական վիճակի մասին բողոքներ ստանալուց հետո Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ իշխանությունները չեն հավաքում տվյալներ տարբեր ազգային փոքրամասնություն ներկայացնող խմբերի պատկանող մարդկանց վիճակի մասին որոշակի ոլորտներում, ինչպես օրինակ՝ զբաղվածության, առողջապահական ծառայություններից օգտվելու, բնակության վայր ունենալու մասին:

60. Խորհրդատվական կոմիտեն այն կարծիքին է, որ ըստ տարիքի, սեռի, աշխարհագրական բաշխվածության եւ հատկապես զբաղվածության ոլորտի վստահելի վիճակագրության պակասը ավելի է դժվարացնում նպատակաուղղված քաղաքական միջոցառումների մշակումը, որոնք

պետք է լուծեն այդ խնդիրները: Այն գտնում է, որ տվյալների պաշտպանության մասին միջազգային չափանիշներին համապատասխան նման վիճակագրական տվյալների հավաքումը անհրաժեշտ է ճիշտ նպատակային եւ կայուն միջոցներ նախագծելու համար, որոնք բավարարում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կարիքները: Խորհրդատվական կոմիտեն ցանկանում է ընդգծել նման տվյալների կարեւորությունը փոքրամասնությունների եւ, մասնավորապես, խոցելի խմբերի պաշտպանության նպատակով հանրային քաղաքականության նախապատրաստման, իրականացման եւ դիտանցման համար: Անհրաժեշտ է նաեւ կազմակերպել իրազեկության բարձրացմանն ուղղված քարոզարշավներ ազգային փոքրամասնության պատկանող անձանց շրջանում այն մասին, որ նման տվյալների հավաքումը անհրաժեշտ է համապատասխան միջոցառումներ մշակելու համար:

Առաջարկություն

61. Իշխանությունները պետք է ընդունեն միջոցներ, որոնք անհրաժեշտ են ըստ տարիքի, սեռի եւ աշխարհագրական վայրի վստահելի սոցիալ–տնտեսական տվյալներ հավաքելու համար բոլոր ոլորտներում՝ մասնավորապես զբաղվածության հետ կապված: Այս նպատակով իշխանությունները պետք է մշակեն համապատասխան մեթոդներ էթնիկ պատկանելության տվյալներ հավաքելու համար՝ միեւնույն ժամանակ

պահպանելով ինքնանույնացման սկզբունքը եւ անձնական տվյալների պաշտպանության միջազգային չափանիշները:

Շրջանակային կոնվենցիայի 5–րդ հոդված
Պայմաններ, որոնք թույլ են տալիս փոքրամասնություններին պահպանելու եւ զարգացնելու իրենց մշակույթը

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

62. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ արեց՝ չնայած երկրի տնտեսական դժվարություններին, շարունակել օժանդակությունը փոքրամասնությունների մշակույթի պահպանման եւ զարգացման նախագծերին՝ խորհրդակցելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, եւ աջակցություն ցուցաբերել՝ համաձայն տարբեր խմբերի պահանջների:

Ներկա իրավիճակը

63. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ մատնանշում է, որ իշխանությունները տարեկան միջոցներ են հատկացնում՝ ազգային փոքրամասնությունների ավանդույթներն ու մշակույթը խթանելու համար: Խորհրդատվական կոմիտեն, մասնավորապես, հետաքրքրությամբ մատնանշում է, որ չնայած ներկա տնտեսական դժվարություններին՝ Մշակույթի նախարարության՝ «Աջակցություն ազգային

փոքրամասնությունների մշակույթին» ծրագրի շրջանակներում հատկացված միջոցները, որոնք օգտագործվել են արվեստի ցուցահանդեսների եւ երաժշտական համերգների աջակցության համար, տարիների ընթացքում շարունակաբար աճել են: Մշակույթի նախարարությունը եւ այլ պետական հաստատություններ աջակցության միջոցներ են հատկացրել ազգային փոքրամասնությունների լեզուներով գրադարանների, ֆիլմերի նկարահանումների եւ գրքերի հրատարակման համար:

64. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ կոմունիստական վարչակազմի օրոք բռնագանձված սեփականությունը վերադարձվել է Արզնիի եւ Վերին Դվինի ասորական կրոնական համայնքներին եւ ռուս ուղղափառ համայնքին՝ Երեւանում: Խորհրդատվական կոմիտեն նաեւ ողջունում է Հայաստանի իշխանությունների կողմից տրամադրված ֆինանսական օգնությունը՝ վերականգնելու համար Վայոց Ձորի հրեական գերեզմանատունը եւ կառուցելու Երեւանում Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին զոհված ասորիներին նվիրված հուշարձան :

65. Խորհրդատվական կոմիտեն նշում է, սակայն, որ մի շարք անձինք շեշտել են, որ ազգային փոքրամասնությունների գործունեությանը ուղղված պետական ֆինանսական աջակցությունը դեռ սահմանափակ է եւ ոչ բավարար՝ այդ խմբերի կարիքների բավարարման համար:

Առաջարկություն

66. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել բոլոր ազգային փոքրամասնությունների կարիքներին՝ ներառյալ թվով ավելի փոքրերին, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթն ու լեզուն պահպանվի եւ զարգանա:

Շրջանակային կոնվենցիայի 6–րդ հոդված
Միջէթնիկական եւ միջմշակութային հարաբերություններ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

67. Դիտանցման նախորդ փուլերի ընթացքում Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին կոչ արեց առանձնակի ուշադրություն դարձնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հանդեպ խտրականության վկայակոչված դեպքերի վրա եւ ուշադրությամբ հետաքննել հնարավոր դեպքերը: Առաջարկվում է նաեւ իրականացնել մամուլում ազգային ատելության խթանման հնարավոր դեպքերի խորը դիտանցում:

Ներկա իրավիճակը

68. Ընդհանուր առմամբ, Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ Հայաստանում մեծամասնության եւ ազգային փոքրամասնությունների միջեւ տիրում է հանդուրժողականության եւ ըմբռնման ընդհանուր մթնոլորտ, եւ որ ազգային փոքրամասնությունների

ներկայացուցիչները չեն հայտնել իրենց համայնքների անդամների դեմ դրսեւորած անհանդուրժողականության դեպքերի մասին:

69. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ըստ իշխանությունների՝ 2002-2008 ժամանակահատվածում[6] ազգային (էթնիկ) հիմքի վրա հանցագործության որեւէ դեպք չի արձանագրվել:

70. Այնուամենայնիվ, տարբեր աղբյուրների կողմից Խորհրդատվական կոմիտեի ուշադրությանը ներկայացված տեղեկությունների համաձայն՝ եզդի փոքրամասնությունը շարունակում է մնալ կարծրատիպերի եւ անհանդուրժողականության զոհ:

71. Խորհրդատվական կոմիտեն նաեւ տեղեկություններ է ստացել, որ 2005, 2006 եւ 2007 թվականներին Երեւանի կենտրոնի այգիներից մեկում գտնվող Հոլոքոստի հուշարձանը ենթարկվել էր վանդալիզմի: Կոմիտեն պահանջում է, որ իշխանությունները անհապաղ եւ համարժեքորեն արձագանքեն այդ դեպքերին:

72. Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է, որ հրեատյացության հայտարարությունները, որոնք արվել են մամուլի որոշ ներկայացուցիչների կողմից՝ ներառյալ տպագիր մամուլում եւ «ԱԼՄ« մասնավոր հեռուստաընկերության եթերով, իշխանությունների կողմից համարժեք արձագանք չեն ստացել ՝ չնայած հրեական համայնքի ներկայացուցիչների բողոքներին:

---

[6] Տե՛ս նաեւ Հայաստանի կողմից կոմիտեին ներկայացված «Ռասայական խտրականության վերացման մասին» հինգերորդ եւ վեցերորդ պարբերական զեկույցների § 59–ը http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/437/44/PDF/G1043744.pdf?OpenElement

73. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ իշխանությունները ընդունել են, որ քուրդ եւ եզդի ազգային փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչների միջեւ առկա է մնայուն անհանդուրժողականություն եւ մի շարք քայլեր են ձեռնարկվել՝ ինչպես օրինակ եզդիերենով եւ քրդերենով դպրոցական դասագրքերի հրատարակումը, ինչը միտված է այդ երկու խմբերի միջեւ գոյություն ունեցող էթնիկ լարվածության մեղմացմանը:

Առաջարկություններ

74. Իշխանությունները պետք է առավել վճռորոշ միջոցներ ձեռնարկեն՝ բոլոր տեսակի անհանդուրժողականության դեպքերի դեմ պայքարելու համար, ինչպես նաեւ պետք է փոխըմբռնում եւ փոխադարձ հարգանք խթանեն Հայաստանի տարբեր էթնիկ եւ կրոնական խմբերի միջեւ՝ ներառյալ կրոնական բազմազանության նկատմամբ հարգանքը:

75. Իշխանությունները պետք է ակտիվացնեն ջանքերը՝ հանդուրժողականության եւ խտրականության հետ առնչվող հարցերի մասին իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար, ինչը պետք է ուղղված լինի իրավապահ մարմինների, մամուլի, դատական իշխանությունների եւ հասարակության ներկայացուցիչներին:

76. Խորհրդատվական կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելի վճռորոշ քայլեր ձեռնարկել՝ կանխելու, հետաքննելու եւ քրեական հետապնդման ենթարկելու այնպիսի հանցագործություններ

կատարողներին, որոնց կատարման ընթացքում նրանք առաջնորդվել են ռասայական, հակահրեական կամ օտարատյացության նկատառումներով եւ ապահովել հասարակության մեջ այս երեւույթի մշտական դիտանցումը:

77. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ընդունել հետագա օրենսդրական միջոցներ եւ ծրագրեր՝ մամուլում օտարատյացության դեմ պայքարելու համար՝ հավատարիմ մնալով «Ատելություն քարոզող կոչի» վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ R(97)20 Առաջարկության ոգուն:

Շրջանակային կոնվենցիայի 9–րդ հոդված
Մամուլի մատչելիությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

78. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն կոչ արեց իշխանություններին՝ վերացնել փոքրամասնության լեզուներով հետագա հեռարձակման հնարավոր խոչընդոտները, մասնավորապես՝ փոքրամասնության լեզուներով ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հեռարձակման եթերաժամի իրավական սահմանափակումները, եւ խրախուսեց նրանց եղանակներ գտնելու մամուլում ազգային փոքրամասնությունների մասնակցության մեծացման համար:

Ներկա իրավիճակը

79. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ ռադիոյի եւ հեռուստատեսության ալիքները շարունակում են հեռարձակել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ: Մասնավորապես, համաձայն Պետական զեկույցի մեջ զետեղված տեղեկության՝ Հանրային ռադիոն հեռարձակում է ամենօրյա ծրագրեր ազգային փոքրամասնությունների 13 լեզուներով, իսկ Հանրային հեռուստատեսության «Հայլուր» ծրագիրը կանոնավոր կերպով նյութեր է պատրաստում ազգային փոքրամասնություններին վերաբերող խնդիրների վերաբերյալ:

80. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ մասնավոր հեռուստառադիո հեռարձակումների իրավական սահմանափակումներ չկան եւ որ գոյություն ունեն քսաներկու մասնավոր հեռուստահեռարձակողներ՝ ներառյալ ազգային փոքրամասնությունների լեզուներով: Խորհրդատվական կոմիտեն նշում է նաեւ, որ համաձայն իշխանությունների կողմից տրամադրված տեղեկության՝ ասորի ազգային փոքրամասնության ներկայացուցիչները իրենց շահագրգռվածությունն են արտահայտել մասնավոր ռադիոկայան հիմնելու, սակայն մինչ օրս այդ նախագիծը չի իրականացվել:

81. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի՝ 2008 թվականին ընդունված փոփոխություններից հետո փոքրամասնության լեզուներով հեռարձակման սահմանափակումը օրական մեկ ժամ է՝ հանրային ռադիոյի դեպքում, եւ երկու ժամ՝ հանրային հեռուստատեսության

ալիքների համար: Բացի դրանից՝ փոփոխություններով այդ ծրագրերի համար չեն սահմանվում որեւէ նվազագույն ժամանակ:

Առաջարկություններ

82. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին՝ ապահովելու, որ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության ցանցերը շարունակեն ստեղծել եւ հեռարձակել ծրագրեր ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ Շրջանակային կոնվենցիայի համապատասխան դրույթների հիման վրա:

83. Խորհրդատվական կոմիտեն նաեւ կոչ է անում իշխանություններին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ համագործակցելով վերանայել հանրային հեռարձակողների վերաբերյալ գոյություն ունեցող իրավական ակտերը, մասնավորապես, որպեսզի սահմանվի երաշխավորված նվազագույն ժամանակահատված ազգային փոքրամասնության լեզուներով հեռարձակումների համար եւ վերացվի այդ լեզուներով հանրային ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հեռարձակումների ժամանակային սահմանափակումները:

Շրջանակային կոնվենցիայի 10–րդ հոդված
Ազգային փոքրամասնությունների լեզուների գործածումը վարչական մարմինների հետ հարաբերություններում

Առաջարկություններ դիտանցումների նախորդ երկու փուլերից

84. Դիտանցման նախորդ երկու փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսում էր Հայաստանի իշխանություններին՝ շարունակելու բաց եւ գործնական մոտեցում ցուցաբերել ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման նկատմամբ վարչակազմի հետ առնչությունների ժամանակ եւ հետագայում էլ խրախուսել «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված իրավունքների իրականացումը:

Ներկա իրավիճակը

85. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ վարչական մարմինների հետ հարաբերություններում օգտագործվող փոքրամասնությունների լեզուների հետ կապված իրավիճակը Հայաստանում երկրորդ Եզրակացության ընդունումից հետո զգալի փոփոխությունների չի ենթարկվել: 2004 թվականին ընդունված «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքը իրավունք է սահմանել՝ օգտագործելու փոքրամասնության լեզուները վարչական մարմինների հետ բանավոր կամ գրավոր հարաբերությունների ժամանակ՝ միայն եթե գրավոր թարգմանությունների դեպքում թարգմանությունը կցվել է: Բացի դրանից, 2007 թվականին ընդունված Քաղաքացիական դատավարության

օրենսգրքի փոփոխությունը սահմանեց վարույթների մասնակիցների իրավունքը՝ օգտագործելու հայերենից բացի այլ լեզուներ՝ եթե միայն նրանք իրենց հաշվին տրամադրեն հայերեն թարգմանությունը: Թեեւ Խորհրդատվական կոմիտեն ողջունում է այդ զարգացումները, սակայն նշում է, որ համաձայն իր մոտ եղած տեղեկության, հանրային կյանքում հայերենից բացի այլ լեզվի օգտագործումը ոչ՛ ակտիվորեն խրախուսվում է, ո՛չ էլ օժանդակվում:

Առաջարկություն

86. Խորհրդատվական կոմիտեն առաջարկում է, որ իշխանությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ կիրառելու համար գոյություն ունեցող օրենսդրությունը, որն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց շնորհում է իրավունք՝ օգտագործելու իրենց լեզուն վարչական մարմինների հետ հարաբերությունների ժամանակ:

Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդված
Փոքրամասնության լեզուների գործածումը հայրանունների համար

Ներկա իրավիճակը

87. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ ծննդյան, ամուսնության վկայականներում եւ նույնականացման քարտերում ռուս, բելառուս եւ ուկրաինացի փոքրամասնություններին պատկանող անձանց հայրանունների արտագրման ներկա գործելակերպը հաշվի չի առնում այդ լեզուների քերականական կանոնները եւ թույլ չի տալիս հայրանուններին ավելացնել «–ովիչ», «– ովնա», «–եվիչ», «–եվնա», «–իչ», «–իվնա» ածանցները: Այդ անձանց հայրանունները գրվում են՝ համաձայն հայերեն լեզվի քերականական կանոնների՝ «–ի» ածանցով:

88. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ հայրանունների գրելաձեւը համարվում է մշակութային ավանդույթի կարեւոր մասը: Այդ պատճառով Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ հայրանունների արտագրման հետ կապված ներկա իրավիճակը համահունչ չէ

Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդվածի 1–ին պարբերության եւ դրա բազմակողմանի մեկնաբանության ընդհանուր սկզբունքի հետ: Խորհրդատվական կոմիտեն այդ պատճառով խրախուսում է Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ համապատասխան օրենսդրությունը Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդվածին համապատասխան դարձնելու համար:

Առաջարկություն

89. Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին խրախուսում է՝ փոփոխելու օրենսդրական եւ վարչական ակտերը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հայրանունները հայերեն թարգմանելու (վերարտադրելու) վերաբերյալ, որպեսզի ապահովվի իրենց կարիքների բավարարումը՝ համաձայն Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդվածում նշված դրույթների:

Տեղագրական նշագրումներ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

90. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսել է իշխանություններին՝ բազմակողմանի խորհրդատվություններ վարել ազգային փոքրամասնությունների հետ, որպեսզի ավելի հստակ իրավական երաշխիքներ ունենալ՝ փոքրամասնությունների լեզուները

տեղագրական նշագրումների եւ նշանների համար օգտագործելու նպատակով:

Ներկա իրավիճակը

91. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ տեղագրական նշագրումներում փոքրամասնության լեզուների օգտագործման կանոնակարգը Հայաստանում չի փոփոխվել նախորդ դիտանցման փուլից սկսած: Համաձայն Խորհրդատվական կոմիտեյում առկա տեղեկության՝ այս ոլորտում օրենսդրական դրույթների փոփոխություններ չեն եղել եւ իշխանությունները որեւէ ուսումնասիրություն չեն իրականացրել, որպեսզի գնահատեն առկա կարիքներն ու պահանջները այն աշխարհագրական շրջաններում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց զգալի քանակով: Խորհրդատվական կոմիտեն այս կանոնակարգման պակասը դիտում է որպես թերություն՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ գործնականում բազմալեզու ցուցանակները տեղադրված են Հայաստանի շատ վայրերում:

Առաջարկություններ

92. Իշխանությունները պետք է ազգային փոքրամասնությունների հետ խորհրդատվություն վարելով գնահատեն, թե արդյո՞ք կա ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործման անհրաժեշտություն

կամ պահանջ այն աշխարհագրական շրջաններում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց զգալի քանակով:

93. Խորհրդատվական կոմիտեն հորդորում է իշխանություններին համապատասխան իրավական երաշխիքներ սահմանել, որպեսզի ազգային փոքրամասնությունները ունենան ցուցանակներ ավանդական տեղական անունները, փողոցի անունները եւ այլ տեղագրական նշագրումներ նաեւ փոքրամասնության լեզուներով հանրության համար ցուցադրելու համար: Օրենսդրությունը եւ գործելակերպը պետք է համապատասխանեն Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդվածի 3–րդ պարբերությանը եւ դրանց մեջ ամրագրված պահանջներին:

Շրջանակային կոնվենցիայի 12–րդ հոդված
Կրթության հավասար հասանելիությունը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

94. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն համարում էր, որ իշխանությունները պետք է երաշխավորեն, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար կրթությունը հավասարապես հասանելի լինի եւ որ նրանք ունենան հնարավորություն ծանոթանալու իրենց եւ մեծամասնություն կազմող բնակչության մշակույթին, պատմությանը, լեզուներին եւ ավանդույթներին: Խորհրդատվական կոմիտեն, մասնավորապես, խրախուսեց իշխանություններին առանձնակի շեշտ դնել որակյալ դասագրքերի

պատրաստման տարածման վրա եւ կոչ արեց իշխանություններին քայլեր ձեռնարկել՝ վերսկսելու համար նախադպրոցական կրթությունը այն համայնքներում, որտեղ երեխաները տանը չեն խոսում դասավանդման լեզվով (հայերեն կամ ռուսերեն):

Ներկա իրավիճակը

95. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանի 39 դպրոցներում եղել են դասարաններ, որտեղ բոլոր առարկաները դասավանդվել են ռուսերենով: Այդ դպրոցները, որոնք ծառայում են հիմնականում Հայաստանում բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին, նաեւ ընդունում են ռուս եւ այլ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների: Խորհրդատվական կոմիտեն նշում է նաեւ, որ համաձայն՝

Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ համաձայնագրի՝ այդ դպրոցներում օգտագործվում են Ռուսաստանում արտադրված դասագրքերը:

96. Խորհրդատվական կոմիտեն դրական է համարում իշխանությունների՝ պետական դպրոցների բոլոր դասարաններում ռուսերեն, ասորերեն, եզդիերեն եւ քրդերեն փոքրամասնության լեզուներով ուսումնական ծրագրեր մշակելու ջանքերը: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է իշխանությունների՝ ռուսերեն, ասորերեն, եզդիերեն եւ քրդերեն փոքրամասնության լեզուներով դասագրքերի հրատարակումը: Այն

սակայն նշում է, որ ներկայիս ջանքերը ամբողջապես չեն բավարարում ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կարիքները:

97. Խորհրդատվական կոմիտեն ողջունում է Սոցիոլոգիա առարկայի ներդրումը ուսումնական ծրագրում, ինչը սովորեցնում է «ազգային փոքրամասնությունների իրավունքների» եւ «հանդուրժողականության» հիմնական սկզբունքները: Այդ դասերը միտված են բարձրացնելու աշակերտների տեղեկացվածությունը ազգային փոքրամասնությունների պատմական, հասարակական եւ մշակույթային ոլորտում եւ իրենց ներդրումը հայ հասարակության կյանքում:

98. Խորհրդատվական կոմիտեն նաեւ ողջունում է Հանրապետական ընդունող հանձնաժողովի որդեգրած մոտեցումը՝ առաջնահերթության կարգով ընդունելու ազգային փոքրամասնությունների պատկանող դիմորդներին, որոնք հանձնել են համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունները:

99. Խորհրդատվական կոմիտեն մտահոգված է եզդի եւ քուրդ փոքրամասնություններին պատկանող նախադպրոցական կրթության մեջ ներգրավված երեխաների քիչ քանակով: Հաճախման այս պակասը այդ երեխաներին ակնհայտ անբարենպաստ վիճակում է դնում, երբ նրանք սկսում են տարրական դպրոցի կրթությունը՝ հաշվի առնելով հայոց լեզվի իրենց անբավարար գիտելիքները: Խորհրդատվական կոմիտեն ողջունում է պետական իշխանությունների նախաձեռնությունները, որոնք միտված են օգնելու տեղական իշխանություններին՝ հիմնելու մանկապարտեզներ

ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով բնակեցված վայրերում:

Առաջարկություններ

100. Խորհրդատվական կոմիտեն կարծում է, որ իշխանությունները պետք է շարունակեն իրենց երկխոսությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի վերլուծեն ազգային փոքրամասնությունների պահանջը՝ ստանալ իրենց լեզվով կամ իրենց լեզվի կրթություն եւ համապատասխան լրացուցիչ միջոցներ ձեռնարկել:

101. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին վերանայել գոյություն ունեցող կարիքները՝ ապահովելու համար փոքրամասնությունների լեզվով ձեռնարկների եւ դասագրքերի համապատասխան մատակարարումը:

102. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին, որպես առաջնահերթություն, ավելի հետեւողական ջանքեր գործադրել՝ ապահովելու համար, որ մանկապարտեզները հասանելի լինեն եզդի եւ քուրդ բոլոր երեխաներին եւ երաշխավորելու, որ այդ մանկապարտեզների ուսումնական ծրագրերը համապատասխանեն այդ խմբերի բազմազան կարիքներին եւ բազմալեզու կազմին:

Շրջանակային կոնվենցիայի 14–րդ հոդվածը
Փոքրամասնության լեզուների եւ լեզուներով դասավանդումը

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

103. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն հորդորել է իշխանություններին պատշաճ կերպով հաշվի առնել համապատասխան անձանց կրթության հետ կապված նախապատվությունները, ինչպես նաեւ ջանքեր գործադրել արձագանքելու ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձանց հատուկ կարիքներին, որոնք ընտրում են ռուսերենը՝ որպես իրենց կրթության լեզու: Այն նաեւ խրախուսում է իշխանություններին՝ ավելի մեծ աջակցություն ցուցաբերել ասորերենից, եզդիերենից, քրդերենից եւ ռուսերենից բացի այլ փոքրամասնության լեզուներով դասավանդմանը եւ օժանդակություն ցուցաբերել ազգային փոքրամասնությունների հետագա համապատասխան նախաձեռնություններին:

Ներկա իրավիճակը

104. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Հայաստանում կրթական համակարգը ենթարկվել է զգալի փոփոխությունների վերջին վեց տարիների ընթացքում: Խորհրդատվական կոմիտեն նաեւ հետաքրքրությամբ նշում է, որ «2009-2012 թվականների համար կրթության զարգացման պետական ծրագրի» ընդունումը, որը վերաբերում է այնպիսի առանցքային խնդիրների, ինչպիսիք են՝ ուսումնական ծրագրի մշակումը, աշխատանքների կատարման գնահատումը եւ ուսուցիչների վերապատրաստումը: Ազգային փոքրամասնությունների լեզուների եւ լեզուներով դասավանդումը մշակվել

է Լեզվի քաղաքականության պետական ծրագրի շրջանակներում՝ որի հայտարարված նպատակներն են «պահպանել եւ մշակել փոքրամասնության լեզուները Հայաստանում ժողովրդավարության համար եւ ժողովրդական եւ քաղաքացիական հասարակության ստեղծման համար»:

105. Համաձայն պետական զեկույցում զետեղված տեղեկության՝ գոյություն ունեցող սահմանադրական դրույթը 41–րդ հոդվածում ունի հետեւյալ տեսքը «Բոլորը իրավունք ունեն պահպանելու իրենց էթնիկ ինքնությունը»: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն «պահպանելու եւ զարգացնելու իրենց ավանդույթները, կրոնը, լեզուն եւ մշակույթը», ինչը ավելի է ամրապնդվել 2009 թվականին ընդունված «Կրթության մասին» օրենքով: Մասնավորապես, սույն Օրենքի 4–րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում կազմակերպել պետական դպրոցներում փոքրամասնության լեզուների եւ լեզուներով կրթությունը:

106. Խորհրդատվական կոմիտեն գոհունակությամբ նշում է, որ փոքրամասնության լեզուներով ուսուցումը ներառված է պետական կրթության համակարգում եւ նշում է, որ ռուսերենը, եզդիերենը, քրդերենը, հունարենը եւ ասորերենը դասավանդվում են այն շրջաններում, որտեղ ապրում են զգալի թվով անձինք, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին: Իշխանությունները նաեւ տեղեկացրել են Խորհրդատվական կոմիտեին Երեւանում բելառուսերեն, վրացերեն, գերմաներեն, լեհերեն եւ ուկրաիներեն սովորելու հնարավորությունների մասին:

Առաջարկություն

107. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին շարունակել իրենց երկխոսությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որպեսզի վերլուծեն փոքրամասնությունների ներկայիս պահանջները՝ ներառյալ փոքրաքանակներինը՝ ստանալու համար փոքրամասնության լեզուների կամ լեզուներով ուսուցում:

Շրջանակային կոնվենցիայի 15–րդ հոդված

Փոքրամասնությունների ներկայացուցչությունը ընտրովի մարմիններում

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

108. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն իշխանություններին խրախուսել է միջոցներ ձեռնարկել՝ ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների մասնակցությունը բարելավելու համար՝ մասնավորապես ազգային մակարդակով: Այն իշխանություններին առաջարկեց նաեւ այլընտրանքային ուղիներ գտնել՝ տեղական ընտրովի մարմիններում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին նշանակելու ժողովրդավարական համակարգ հիմնելու համար:

Ներկա իրավիճակը

109. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ 2008 թվականի տեղական ընտրությունները հաստատեցին ազգային փոքրամասնությունների՝ հասարակական–քաղաքական կյանքին մասնակցելու մեծ հետաքրքրվածությունը: Ազգային փոքրամասնությունների թեկնածուները մասնակցեցին եւ ընտրվեցին՝ որպես տեղական խորհրդատուներ եւ համայնքապետեր: Որոշ գյուղերում ասորի, քուրդ եւ եզդի փոքրամասնությունները ներկայացնող խորհրդատուները մեծամասնություն են կազմում՝ այդ խորհուրդներում ընտրված բոլոր խորհդատուների համեմատ:

110. Սակայն Խորհրդատվական կոմիտեն տեղեկացել է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխման ծրագրերի մասին, որը կարող է թուլացնել ասորի եւ եզդի փոքրամասնություններին պատկանող անձանց հնարավորությունները՝ ազդելու տեղական գործերի վրա (տե՛ս համապատասխան մեկնաբանությունը 16–րդ հոդվածում): Այդպիսի զարգացումը կարող է վնասակար լինել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով[7] հասարակական–քաղաքական կյանքին մասնակցության համար:

---

[7] Տե՛ս «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կոմիտե. երկրորդ Թեմատիկ մեկնաբանություն՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ մշակութային, հասարակական եւ տնտեսական կյանքին եւ հասարակական–քաղաքական կյանքին մասնակցության մասին (2008) §§88-90:

111. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանք է հայտնում, որ իր երկրորդ Եզրակացության ընդունման պահից զգալի առաջընթաց չի արձանագրվել փոքրամասնությունների՝ Խորհրդարանում ներկայացուցչության առումով:

Առաջարկություններ

112. Իշխանություններին խրախուսվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ համատեղ ուսումնասիրել այն օրենսդրական եւ գործնական միջոցները, որոնք կստեղծեն անհրաժեշտ պայմաններ՝ Խորհրդարանում փոքրամասնությունների քաղաքական ներկայացուցչության համար:

113. Իշխանությունները պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ տեղական մակարդակով ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ հնարավորությունները չնվազեն:

Խորհրդատվական մեխանիզմներ

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

114. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն խրախուսեց իշխանություններին՝ շարունակելու Համակարգող խորհրդի աշխատանքը եւ երաշխավորել, որ իր կարծիքները, հարկ եղած դեպքում, պատշաճ կերպով հաշվի առնվեն համապատասխան իշխանությունների կողմից:

Ներկա իրավիճակը

115. Խորհրդատվական կոմիտեն նշում է, որ Ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչությունը՝ հիմնադրված 2004 թվականին, եւ Համակարգող խորհուրդը շարունակում են ակտիվ դեր խաղալ ազգային փոքրամասնություններին առնչվող հարցերի մասին իրազեկության բարձրացման գործում՝ փորձելով հրատապ խնդիրները լուծել կանոնավոր երկխոսության միջոցով: Խորհրդատվական կոմիտեն նշում է նաեւ, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մասնակցում են Հանրային խորհրդի աշխատանքներին, ինչը խորհրդատվական մարմին է՝ հիմնված Հայաստանի Նախագահի որոշմամբ:

116. Խորհրդատվական կոմիտեն նշում է նաեւ, որ Համակարգող խորհուրդը կազմող տասնմեկ ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունները ստանում են յուրաքանչյուրը 818,000 ՀՀ դրամ ֆինանսական դրամաշնորհ (~1,770 €)՝ անկախ իր անդամների հաշվարկված թվից, որպեսզի ծածկեն Համակարգող խորհրդի աշխատանքների ընթացիկ ծախսերը: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնց հետ Խորհրդատվական կոմիտեն հանդիպել է, արտահայտել են իրենց դժգոհությունը ֆինանսավորման մակարդակի հետ կապված, որն անգամ չի ծածկում կազմակերպությունների ամենահիմնական կարիքները:

Առաջարկություն

117. Իշխանությունները պետք է ապահովեն, որ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների համար տրամադրված ֆինանսավորումը արդյունավետ կերպով բավարարի իրենց իրական կարիքները եւ հնարավորություն է ընձեռի իրենց՝ արդյունավետորեն մասնակցելու Համակարգող խորհրդի աշխատանքներին եւ հասարակական–քաղաքական կյանքին:

Շրջանակային կոնվենցիայի 16–րդ հոդված
Տարածքային բարեփոխումը

Ներկա իրավիճակը

118. Խորհրդատվական կոմիտեն ընդգծում է Հայաստանում տեղական ինքնակառավարման բարեփոխման ծրագրերի վերջին քննարկումները, որոնք միտված են պակաս ծախսատար դարձնելու եւ հունի մեջ դնելու տեղական ինքնակառավարումը՝ նվազեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների մեծ թիվը (տե՛ս 15–րդ հոդվածում զետեղված դիտարկումները): Ողջունելով Հայաստանի բոլոր բնակիչներին ավելի լավ մունիցիպալ ծառայություններ մատուցելուն միտված ջանքերը՝ Խորհրդատվական կոմիտեն նշում է սակայն, որ մի շարք առանձնացված գյուղեր, որոնք բնակեցված են զգալի թվով ասորի եւ եզդի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով եւ որոնք ներկայումս ինքնակառավարվող են, կարող են ձուլվել շրջակա գյուղերի հետ, որոնք բնակեցված են ազգությամբ հայ մեծամասնությամբ: Այդպիսի

զարգացումը Խորհրդատվական կոմիտեի կարծիքով անխուսափելիորեն կբերի ասորի եւ եզդի փոքրամասնությունների՝ տեղական գործընթացների վրա ազդելու հնարավորությունների նվազեցմանը:

Առաջարկություն

119. Խորհրդատվական կոմիտեն կոչ է անում իշխանություններին ապահովել, որ ասորի եւ եզդի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները պատշաճ կերպով հաշվի առնվեն տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներ ծրագրելիս եւ իրականացնելիս ու երաշխավորել, որ այդ բարեփոխումները բացասաբար չանդրադառնան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հասարակական–քաղաքական կյանքին արդյունավետ մասնակցության վրա:

Շրջանակային կոնվենցիայի 18–րդ հոդված
Անդրսահմանային համագործակցություն

Առաջարկություններ դիտանցման նախորդ երկու փուլերից

120. Դիտանցման նախորդ փուլերում Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշեց, որ միջսահմանային համագործակցությունը հնարավոր չի եղել իրականացնել Հայաստանի բոլոր հարեւան պետությունների հետ եւ հույս հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղի հետ կապված հիմնախնդրի արդար եւ մնայուն լուծումը հնարավորություններ

կստեղծի անդրսահմանային համագործակցության համար եւ թույլ կտա, որ հիմնախնդրի պատճառով իրենց հայրենի հողերը լքած անձինք անվտանգ եւ ինքնակամ վերադառնան:

Ներկա իրավիճակը

121. Խորհրդատվական կոմիտեն ափսոսանքով նշում է, որ Լեռնային Ղարաբաղի հետ կապված հիմնախնդիրը շարունակում է խոչընդոտել ընդհանուր անդրսահմանային համագործակցությունը տարածաշրջանում եւ ափսոսանքով նշում է, որ հիմնախնդիրը դեռեւս չի գտել իր քաղաքական լուծումը:

Առաջարկություն

122. Խորհրդատվական կոմիտեն հուսով է, որ հիմնախնդրի արդար եւ մնայուն լուծումը կգտնվի շուտով, եւ դա թույլ կտա, որ հիմնախնդրի պատճառով տեղահանված անձինք վերադառնան իրենց հայրենի հողեր:

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

123. Խորհրդատվական կոմիտեն համարում է, որ ներկայիս եզրափակիչ դիտարկումները կարող են ծառայել որպես հիմք այն եզրակացությունների եւ առաջարկությունների համար, որոնք կարող են ընդունվել Խորհրդատվական կոմիտեի կողմից Հայաստանի մասով:

Դիտանցման երկու փուլերից հետո դրական զարգացումները

124. Հայաստանը ցուցաբերել է կառուցողական մոտեցում դիտանցման գործընթացի նկատմամբ եւ ձեռնարկել որոշակի միջոցներ՝ տարածելու համար դիտանցման առաջին երկու փուլերի արդյունքները: Իշխանությունները նաեւ պահպանել են բազմակողմանի մոտեցում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս:

125. Հայաստանում ազգային փոքրամասնությունների եւ բնակչության մեծամասնության միջեւ գերակայում է հանդուրժողականության եւ ըմբռնման ընդհանուր մթնոլորտը, եւ իշխանությունները շարունակում են ցուցաբերել բազմակողմանի մոտեցում Շրջանակային կոնվենցիայի կիրառման ոլորտի նկատմամբ: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները չեն հայտնել իրենց համայնքների անդամների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի մասին:

126. Չնայած Հայաստանում առկա տնտեսական դժվարություններին՝ իշխանությունները շարունակում են ազգային փոքրամասնությունների ավանդույթները եւ մշակույթները խթանելու նպատակով ֆինանսական ռեսուրսներ տրամադրել:

127. Կոմունիստական վարչակազմի ժամանակ բռնագանձված եկեղեցու սեփականությունը վերադարձվել է ասորական եւ ռուսական ուղղափառ համայնքներին:

128. Հայաստանի հանրային ռադիոն եւ հեռուստատեսությունը հեռարձակում են հաղորդումներ ազգային փոքրամասնությունների համար, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների լեզվով: Ընդհանուր առմամբ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները նշել են, որ նրանց առնչվող հարցերը լուծվում են արդար եւ հավասարակշռված եղանակով:

129. Ազգային փոքրամասնությունների լեզուները դասավանդվում են դպրոցներում եւ ջանքեր են գործադրվել փոքրամասնությունների լեզուներով դասավանդման համար նախատեսված դասագրքեր հրատարակելու համար:

Դիտանցման երկու փուլերից հետո մտահոգող հարցեր

130. 2011 թվականի ծրագրված մարդահամարը լուրջ մտահոգությունների տեղիք տվեց՝ կապված ազգային փոքրամասնությունների պատկանող

անձանց՝ ընտրելու, որպեսզի իրենց վերաբերվեն կամ չվերաբերվեն որպես այդպիսիք: Մասնավորապես, ազգության (էթնիկ) պատկանելության եւ լեզվի մասին հարցերի պարտադիր բնույթն ու ձեւակերպումը խնդիրներ է առաջացնում ինքնանույնացման իրավունքի հարցում եւ հակասում է ՄԱԿ–ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ–ի ԵՏՀ) եւ Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակի (Եվրաստատ) 2010 թվականի Մարդահամարի եւ բնակության պայմանների առաջարկություններին:

131. Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում բարեփոխումների ծրագրերը կարող են բացասաբար անդրադառնալ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հասարակական–քաղաքական կյանքին արդյունավետ մասնակցության իրավունքի վրա:

132. Դեռեւս չի ընդունվել խտրականությունը բացառող որեւէ համապարփակ իրավական ակտ, եւ այս ոլորտում դեռեւս բացակայում են վստահելի վիճակագրական տվյալները:

133. Հակահրեական հայտարարությունները, որոնք արվել են որոշ լրատվամիջոցների կողմից, իշխանությունների եւ հանրության կողմից համարժեք արձագանք չեն ստացել:

134. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքում 2008 թվականին կատարված փոփոխություններով սահմանվել են Հանրային ռադիոյով օրական մեկ ժամ եւ հանրային հեռուստատեսությամբ շաբաթական երկու ժամ ազգային փոքրամասնության լեզվով հեռարձակման առավելագույն

եթերաժամ՝ այսպիսով սահմանափակելով փոքրամասնությունների մուտքը հանրային լրատվամիջոցներ:

135. Ռուս, բելառուս եւ ուկրաինացի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ծննդյան եւ ամուսնության վկայականներում եւ ինքնությունը հաստատող փաստաթղթերում հայրանունները հայերենով թարգմանելիս (վերարտադրելիս) հաշվի չեն առնվում այս լեզուների քերականական կանոնները, եւ ուստի, դրանք չեն համապատասխանում Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1–ին պարբերությանը եւ դրա համապարփակ մեկնաբանության ընդհանուր սկզբունքին:

Առաջարկություններ

136. Խորհրդատվական կոմիտեի եզրակացության 1–ին եւ 2–րդ բաժիններում ներառված մանրամասն առաջարկությունների իրականացման համար միջոցներ ձեռնարկելուց բացի՝ իշխանություններին կոչ է արվում ձեռնարկել հետեւյալ միջոցները՝ Շրջանակային կոնվենցիայի հետագա իրականացմանը նպաստելու համար:

Անհապաղ գործողություններ պահանջող խնդիրներ[8]

- **2011 թվականի բնակչության մարդահամարի նախապատրաստման համատեքստում վերանայել ազգային**

[8] Ստորեւ բերված առաջարկությունները նշված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականությամբ:

փոքրամասնության պատկանող անձանց ինքնության բացահայտման եւ նրանց փոքրամասնության լեզվի վերաբերյալ հարցերի շարադրանքը եւ հարցաշարում կիրառվող մեթոդաբանությունը.

- **Ձեռնարկել կտրուկ միջոցներ՝ ապահովելու համար, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները պատշաճ կերպով հաշվի առնվեն տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներ ծրագրելիս եւ իրականացնելիս եւ երաշխավորել, որ այդ բարեփոխումները բացասաբար չանդրադառնան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական մակարդակով հասարակական–քաղաքական կյանքին արդյունավետ մասնակցության վրա:**

Հետագա առաջարկություններ[9]

- **Միջոցներ ձեռնարկել ընդունելու համապարփակ օրենսդրություն եւ ապահովելու խտրականության դեմ արդյունավետ միջոցներ.**
- **Շարունակել աջակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների մշակութային գործունեությանը,**
- **Խիստ գործողություններ ձեռնարկել՝ կանխելու, հետաքննելու եւ դատական կարգով հետապնդելու ռասայական, հակահրեական եւ այլատյացության դրդապատճառներով հանցագործություն կատարողներին եւ ապահովելու հասարակության մեջ այդ երեւույթի մշտական դիտանցումը:**
- **Վերանայել հանրային ռադիոյի եւ հեռուստահեռարձակողների վերաբերյալ գոյություն ունեցող օրենսդրությունը՝ մասնավորապես, նպատակ ունենալով սահմանելու ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների երաշխավորված նվազագույն ժամանակահատված եւ վերացնելու այդ լեզուներով հանրային ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հեռարձակումների ժամանակային սահմանափակումները:**
- **Փոփոխել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հայրանունները հայերեն թարգմանելու (վերարտադրելու) մասին օրենսդրական եւ վարչական ակտերը,**

---

[9] Ստորեւ բերված առաջարկությունները նշված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականությամբ:

որպեսզի երաշխավորվի, որ իրենց կարիքները բավարարված են՝ համաձայն Շրջանակային կոնվենցիայի 11–րդ հոդվածում սահմանված դրույթների: